ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԹԻՎ _5/134
«10» 12 2014Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ավագանու 2014թ-ի դեկտեմբերի 8-ին կայացած թիվ 11 նիստի որոշումները:

Առդիր «12» թերթից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-51

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» դեկտեմբերի 2014 թվականի N 35-Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12 - րդ հոդվածի 5-րդ մասով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Հաստատել Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ավագանու թիվ 11 նիստի օրակարգը՝համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան---------- (ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Ի.Ազիզյան---------- (ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Ա.Սարգսյան ----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Ս.Ստեփանյան ----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Կ.Հարությունյան ----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Մ.Մեսրոպյան----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Գ.Նազարյան ----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Ա.Ավագյան---------- (ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2014 թվականի դեկտեմբերի 8
գ.Արմավիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի գյուղական համայնքի
ավագանու 2014թ. դեկտեմբերի 8-ի
N 35-Ա որոշման

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. .ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 դեկտեմբերի 2014 թվականի N 36-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ե Տ՝

1. Որոշել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը 230.000<< դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ի.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ա.Սարգսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ս.Ստեփանյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Մ.Մեսրոպյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Հարությունյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Գ.Նազարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ա.Ավագյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)

Համայնքի ղեկավար *Ռ.Ֆ.Մարգարյան*

2014 թվականի դեկտեմբերի 8
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 դեկտեմբերի 2014 թվականի N 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց՝

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 2015թ գյուղապետարանի աշխատակազմի,համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և աշխատավարձի դրույքաչափերը՝համաձայն հավելվածի.
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա վ ա գ ան ու ա ն դ ա մ ն ե ր

Կողմ	Դեմ	Չեռնպահ
Թ.Պողոսյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ի.Ազիզյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ա.Սարգսյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ս.Ստեփանյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Մ.Մեսրոպյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Հարությունյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Գ.Նազարյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ա.Ավագյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)

Համայնքի ղեկավար *Ռ.Ֆ.Մարգարյան*

2014 թվականի դեկտեմբերի 8
գ.Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
դեկտեմբերի 31-ի N 37-Ա ՈՐՈՇՄԱՆ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 13
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքը
1.	Համայնքի ղեկավար	1	230000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	160000
	Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Զ Մ		
3.	Աշխատակազմի քարտուղար	1	175000
4.	Առաջատար մասնագետ	3	160000
5.	1-ին կարգի մասնագետ	2	130000
6.	2-րդ կարգի մասնագետ	1	110000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
7.	Գործավար	1	135000
8.	Կատարածու	1	66138
9.	Վարորդ	1	103000
10.	Հավաքարար	1	66138

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 9
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքը
1.	գլխավոր ռեժիսոր	1	66138
2.	Գեղմասվար	1	66138
3.	Գրադարանի վարիչ	1	66138
4.	Մարզիչ	1	79500
5.	Մարզիչ	1	66138
6.	Մարզիչ	1	70822
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ	ԱՆՁՆԱԿԱԶՄ	
7.	Պահակ	2	66138
8.	Հավաքարար	1	70822

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
,,ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 20
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքը
1.	Տնօրեն	1	100000
2.	ուսմասվար	1	70822
3.	քանոնի ուսուցիչ	1	66138
4.	շվիի ուսուցիչ	1	66138
5.	դաշնամուրի ուսուցիչ	1	70822
6.	դաշնամուրի ուսուցիչ	1	70822
7.	դաշնամուրի ուսուցիչ	1	70822
8.	դաշնամուրի ուսուցիչ	1	70822
9.	դաշնամուրի ուսուչիչ	1	70822
10	վոկալի ուսուցիչ	1	70822
11.	սոլֆեջիոյի ուսուցիչ	1	66138
12.	դհոլի ուսուցիչ	1	70822
13.	կերպարվեստի ուսուցիչ	1	66138
14.	Դուդուկի ուսուցիչ	1	84000
15.	Կոնցերտմեյստր	1	66138
16.	հաշվապահ	1	80000
17.	պարուսույց	1	66138
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ	ԱՆՁՆԱԿԱԶՄ	
18.	քարտուղարուհի-գործավար	1	70822
19.	հավաքարար	1	66138
20.	պահակ	2	66138

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
,,ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 17
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքը
1.	Մանկապարտեզի վարիչ	1	93000
2.	դաստիարակ	2.5	92600
3.	դաշնակահար	0.5	92600
4.	բուժքույր	0.5	70822
5.	հաշվապահ	0.5	70822
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ	ԱՆՁՆԱԿԱԶՄ	
6.	դայակ	1	70822
7.	դայակ	1	66138

8.	խոհարար	1	66138
9.	խոհարարի օգնական	0.5	66138
10	տնտեսվար	0.5	70822
11.	գործավար	0.5	70822
13.	օժանդակ բանվոր	0.5	66138
14.	այգեպան	1	66138
15.	պահակ	1	66138

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնք 1 փողոց 19 շենք 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» դեկտեմբերի 2014 թվականի N 38-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 - րդ հոդվածի առաջին մասի 19 կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56 -րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի կողմից 2015 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի.
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ի.Ազիզյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ա.Սարգսյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ս.Ստեփանյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Մ.Մեսրոպյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Կ.Հարությունյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Գ.Նազարյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	
Ա.Ավագյան	(ստորագրություն)	(ստորագրություն)	

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2014 թվականի դեկտեմբերի 08
գ.Արմավիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արմավիր գյուղական համայնքի
ավագանու 2014թ.դեկտեմբերի 8-ի
N 38-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող,ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1/ համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝հինգ հազար դրամ.

2/համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար՝մեկ հազար դրամ.

3/ համայնքի բնակիչ համարվող անձանց՝ աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար՝մեկ հազար դրամ.

4/ համայնքի բնակիչ համարվող անձանց՝նպաստներ և կրթաթոշակներ,քաղաքացիների բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում՝դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիրհաստատելու համար՝մեկ հազար դրամ.

1.Համայնքի տարածքում համայնքի բնակիչ համարվող անձանց՝մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

2.Համայնքային ենթակայության մանկական երաժշտական դպրոց և մանկապարտեզ հաճախող երեխաների համար ծնողական վճար սահմանել ամսական երեք հազար դրամ.

1/համայնքի բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափով՝

ա/մեկ ընտանիքից երկու և ավել երեխաների համար՝75 տոկոսի չափով՝երկու հազար երկու հարյուր հիսուն դրամ.

բ/միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝50 տոկոսի չափով՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.

գ/երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝25 տոկոսի չափով՝յոթ հարյուր հիսուն դրամ.

դ/զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների,ինչպես նաև առաջին կարգի հաշմանդամների երեխաների համար՝100 տոկոսի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» դեկտեմբերի 2014 թվականի N 39-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով,«Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասինՀայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի վարչական տարածքում 2015թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա վ ա գ ան ու ա ն դ ա մ ն ե ր

Կողմ	Դեմ	Չեռնպահ
Թ.Պողոսյան---------- (ստորագրություն)	----------(ստորագրություն)	----------
Ի.Ազիզյան---------- (ստորագրություն)	----------(ստորագրություն)	----------
Ա.Սարգսյան ----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)	----------
Ս.Ստեփանյան ----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)	----------
Կ.Հարությունյան----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)	----------
Մ.Մեսրոպյան----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)	----------
Ա.Ավագյան ----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)	----------
Գ.Նազարյան ----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)	----------

Համայնքի ղեկավար՝ *Ռ.Ֆ.Մարգարյան*

2014 թվականի դեկտեմբերի 08
գ.Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի
ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ N 39-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան՝նորշենքերի,շինությունների (ներառյալ ոչ հիմնական)շինարարության (տեղադրման)թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար՝
ա/ մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝երեք հազար դրամ.
բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝երեք հազար դրամ.
բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝հինգ հազար դրամ.
բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝յոթ հազար դրամ.
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝հինգ հարյուր դրամ.
դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար երկու հազար հինգ հարյուր դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերականգնման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա/ չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.
բ/ բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.
գ/ նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար հինգ հարյուր դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝երեք հազար դրամ:
2/ ծխախոտի արտադրանքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝երեք հազար դրամ:
5. Համայնքի տարածքում՝
ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ.
բ/ հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:
7. Համայնքի տարածքում՝առևտրի,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24ᵒᵒ –ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա/ առևտրի օբյեկտների համար՝քսանհինգ հազար դրամ.
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.
գ/ բաղնիքների(սաունաների) համար՝երկու հարյուր հազար դրամ.
դ/ խաղատների կազմակերպման համար՝հինգ հարյուր հազար դրամ.
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝երկու հարյուր հիսուն հազար դրամ.
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝մեկ հարյուր հազար դրամ.
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ զրո դրամ:
9. Համայնքի տարածքում նստատեղ տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ տասը հազար դրամ:
10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
11. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել հինգ հազար դրամ: